ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 178- Ա

09 հունիսի 2015 թ

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից 30000 /երեսուն հազար/ դրամ հատկացնել Հայաստանի Հանրապետության <<Ռոսիա>> հասարակական կազմակերպության <<Գավառ>> մասնաճյուղին՝ ս.թ. հունիսի 11-12-ը Երևան քաղաքի Մոսկվայի տանը կայանալիք երգի մրցույթին մասնակցելու համար համայնքի երգչախմբի թվով 24/քսանչորս/ երեխաների տրանսպորտային ծախսերը հոգալու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել <<Ռոսիա>> հասարակական կազմակերպության <<Գավառ>> մասնաճյուղի նախագահ Տատյանա Մանուկյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ